

Մեր մեծայարգ բարեկամը Տոքթ. Վահրամ Թորգոմեան արդէն սկսած էր Հանդէս Ամսօրեայի մէջ մաս առ մաս հրատարակել Ձէլէպիի Ասամպօլոյ Պատմութիւնը՝ յարակից ընդարձակ ծանօթութիւններով⁽¹⁾, զոր ետքէն առանձին հատորներով լոյս ընծայեց⁽²⁾։ Այն ժամանակ պատեհ առիթ համարեցանք գոհացնել Մեծ. Տոքթորին հարցասիրութիւնը՝ տալով Օրագրութեան քանի մը քաղուածներ և ընել ինչ ինչ ճշգրտման Ձէլէպիի կենսագրութեան վերաբերեալ ու տալ համառօտ մէկ ցուցակը վերջնոյս այն գրական վաստակներուն, որոնք, մեծագոյն մասամբ ինքնագիր, կը պահուին Սուրբ Աթոռի Մատենադարանին մէջ։ Մեր այս հաղորդագրութիւնները երեւցան Մեծ. Տոքթորի աշխատութեան երկրորդ Հատորին մէջ։

Ապա փափաքելով Օրագրութիւնս ծանօթացնել մերազնեայ բանասէրներու՝ 1913ին տուինք անոր նկարագրութիւնը Ս. Էջմիածնի Շողակաք հայագիտական ժողովածոյին մէջ, նոյն ատեն ներկայացնելով անկէ քանի մը համառօտ ու ընդարձակ քաղուածներ, ու ջանացինք ցոյց տալ անոր ունեցած առնչութիւնը Ձէլէպիի միւս ընդարձակ պատմական գործին՝ Տարեգրութեան հետ, որ կը գտնուի Վենետիկի Մխիթարեանց Մատենադարանը⁽³⁾։

(1) Հանդէս ամսօրեայ, 1909՝ թիւ 4, 6, 7, 10. 1910՝ թիւ 1, 3, 4, 6, 9, 10, 12. 1911՝ թիւ 3, 5, 6, 7, և այլն։

(2) Երեմիա Ձէլէպիի Բէմիւրճեան, Ասամպօլոյ Պատմութիւն, էջ 17 + 412, Վիեննա, 1913։ Նոյնը Հատոր Բ. էջ ԺԲ + 413-862, Վիեննա, 1932։ Վերջին անգամ լոյս ընծայեց նոյնին Գ. Հատորը, էջ ԻԸ + 294, Վիեննա, 1938։

(3) Շողակաք՝ Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 47-65։